



# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 դեկտեմբերի 2011թ.

N 1053-Ն

ք.Ստեփանակերտ

### ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի «է» կետին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**Ց Ա Ն Կ**

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ**

**I. ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԵՐԿՐԱՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ**

Գ/Գ	Անվանումը /նկարագիրը/	Տեղադիրքը
1	«Հացոտ» քարանձավ-սրբատեղի	Ասկերան քաղաքից 2կմ հարավ-արևմուտք
2	«Մեծ Լան» քարանձավ-աղբյուր	Ասկերանի շրջան, Խնապատ գյուղից մոտ 2-2.5կմ հարավ-արևմուտք
3	«Իծատանը տոն» քարանձավ	Ասկերանի շրջան, Խնապատ գյուղից 2-2.5կմ հարավ-արևմուտք
4	«Բլեն ծակ» քարանձավ	Ասկերանի շրջան, հին Նորագյուղի մոտ, «Բլեն ծակ» կոչվող տեղամասում
5	«Քարե տուն» քարանձավ	Ասկերանի շրջան, Սարդարաշեն գյուղի մոտ, Չնգլ կոչվող տեղամասում
6	«Խազան աղբյուր» քարանձավ	Ասկերանի շրջան, Վարդաձոր գյուղի մոտ
7	«Սվքարեր» քարանձավ	Ասկերանի շրջան, Պատարա գյուղի մոտ, Սվքարեր կոչվող տեղամասում
8	«Սև» քարանձավ	Ասկերանի շրջան, Պատարա գյուղի մոտ, Դրլխ կոչվող տեղամասում
9	«Պերթ» քարանձավ	Ասկերանի շրջան, Պատարա գյուղի մոտ, Պորթ կոչվող տեղամասում
10	«Ծակ քերծ» քարանձավ	Ասկերանի շրջան, Խնածախ գյուղի մոտ
11	«Հարու» քարանձավ	Ասկերանի շրջան, Հարավ գյուղի մոտ
12	«Անանուն» քարանձավ	Ասկերանի շրջան, Կարկառ գետի աջ ափին, Քարին տակ գյուղից 500մ հյուսիս -արևելք, երկարությունը՝ 72մ
13	«Ճգնավորի» քարանձավ	Մարտակերտի շրջան, Կիչան գյուղից 1,5կմ արևմուտք
14	«Ազոխի» քարանձավ	Հադրութի շրջան, Ազոխ գյուղից 1կմ հարավ-արևելք, երկարությունը՝ 190մ, ծովի մակերևույթից 900մ բարձրության վրա
15	«Ծծախաչ» քարանձավ	Հադրութի շրջան, Մեծ Թաղեր գյուղի հարավային մասում, երկարությունը 22մ, ծովի մակերևույթից 850մ բարձրության վրա
16	«Անանուն» քարանձավ -բնակարան	Քաշաթաղի շրջան, Մազրա գյուղի մոտ
17	«Չորբան գյուղե» քարանձավ	Քաշաթաղի շրջան, Բերդաձոր գյուղից 3-3,5կմ հյուսիս-արևմուտք
18	«Տանձուտ» քարանձավ	Քաշաթաղի շրջան, Տանձուտ գյուղի մոտ
19	«Անանուն» քարանձավ	Շուշիի շրջան Կարկառ գետի ձախ ափին, Քարին տակ գյուղի հյուսիսային մասում, երկարությունը 114մ, ծովի մակերևույթից 1365մ բարձրության վրա

20	«Աստղաշենի» բրածո ֆաունա	Ասկերանի շրջան, Աստղաշեն գյուղի հյուսիս-արևմտյան եզերքում
21	«Յոնուտի ձոր» կիրճ	Շուշիի շրջան, Կարկառի գետահովտի՝ Քարին տակ-Մխիթարաշեն գյուղերի հատվածում
22	«Փանջակ քար» (Դեդ-Նատարին ամրոց) ժայռագագաթ	Մարտակերտի շրջան, Գառնաքար գյուղից 6.5 կմ հարավ-արևմուտք
23	«Ջրաբերդի» կիրճ	Մարտակերտի շրջան, Թարթառ գետի հետ նրա Թրդի վտակի միացման հատվածում
24	«Կաչաղակաբերդ» ժայռագագաթ	Մարտակերտի շրջան, Քոլատակ գյուղից 3,5 կմ հարավ-արևելք
25	«Մուղղուսի քար», (Խոխանաբերդ) ժայռագագաթ	Մարտակերտի շրջան, Գառնաքար գյուղից 6 կմ արևմուտք (Վանք գյուղից 3 կմ հարավ արևելք)
26	«Ալ լճեր» հրաբուխ	Քաշաթաղի շրջան, Յակ գյուղից 22 կմ հյուսիս-արևմուտք
27	«Իշխանասար» հրաբուխ (Կարադաղ լեռ)	Քաշաթաղի շրջան, Յակ գյուղից 15 կմ արևմուտք
28	«Քառման» հրաբուխ (Քարմանբեքափե լեռ)	Քաշաթաղի շրջան, Յակ գյուղից 25 կմ հյուսիս-արևմուտք
29	«Շրմանա քար» ժայռագագաթ	Մարտունու շրջան, Գիշի, Մուշկապատ, Ճարտար գյուղերի արանքում
30	«Աղջկաբերդ» (Կուսաբերդ) ժայռաքանդակ	Մարտունու շրջան, Բերդաշեն գյուղից 2 կմ հյուսիս
31	«Ալսար» հրաբուխ	Շահումյանի շրջան, Մեծ Ալ լճից 4 կմ հարավ-արևմուտք
32	«Քարախաչ» հրաբուխ	Շահումյանի շրջան, «Ջերմաջուր», նախկին առողջարանից 11 կմ արևմուտք
33	«Բյուրակն» հրաբուխ	Շահումյանի շրջան, «Ջերմաջուր» նախկին առողջարանից 11 կմ հարավ-արևմուտք
34	«Աղահեճք» հրաբուխ	Շահումյանի շրջան, «Ջերմաջուր» նախկին առողջարանից 11 կմ հարավ
35	«Անանուն» սյունաձև բազալտների անջատումներ	Շահումյանի շրջան, Թարթառ գետի հյուսիս-արևմտյան գառիթափ լանջին՝ Քարվաճառ շրջկենտրոնի մոտ
36	«Տրտուի» կիրճ	Շահումյանի շրջան, Տրտուի գետահովտի Նոր Գետաշեն-Դադիվանք հատվածում
37	«Դուբխուի» կիրճ	Շահումյանի շրջան, Թուրխունի գետահովտի ստորին հոսանքի՝ Տրտու գետի հետ միացման հատվածում
38	«ԼԼի» կիրճ	Շահումյանի շրջան, ԼԼի գետահովտի ստորին հոսանքի՝ Տրտու գետի հետ միացման հատվածում

## II. ԶՐԱԳՐԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

39	«Գանձակի» ջրվեժ	Մարտակերտի շրջան, Վանք գյուղի մոտ
40	«Ծապին ձոր» ջրվեժ	Մարտակերտի շրջան, Առաջաձոր գյուղի մոտ, 20-25 մ բարձրությամբ
41	«Մեծ Ալ» լիճ	Շահումյանի շրջան, «Ջերմաջուր» նախկին առողջարանից 24 կմ հյուսիս-արևմուտք
42	«Փոքր Ալ» լիճ	Շահումյանի շրջան, «Ջերմաջուր» նախկին առողջարանից 20 կմ հյուսիս-արևմուտք
43	«Սև» լիճ	Շահումյանի շրջան, «Ջերմաջուր» նախկին առողջարանից 10 կմ հարավ-արևմուտք

44	«Ծալք» լիճ	Շահումյանի շրջան, «Ջերմաջուր» նախկին առողջարանից 13կմ հարավ-արևմուտք
45	Ակնալիճ	Շահումյանի շրջան, Դադիվանքից 17կմ հյուսիս
46	«Սև» լիճ	Քաշաթաղի շրջան, Գոչազ գետի աջ վտակ Ծարածորի ակունքների մոտ
47	«Այլախ» լիճ	Քաշաթաղի շրջան, Գոչազ գետի աջ վտակ Ծարածորի ակունքների մոտ
48	«Չոֆլիգյոլ» լիճ	Քաշաթաղի շրջան, Գակ գյուղից 9կմ հյուսիս-արևմուտք
49	«Մեծ» լիճ	Քաշաթաղի շրջան, Գակ գյուղից 6կմ հարավ-արևմուտք
50	«Սև» լիճ	Քաշաթաղի շրջան, Գակ գյուղից 10կմ արևմուտք

### III. ԶՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

51	«Չիչքարի ձոր» սառնատուն	Մարտակերտի շրջան, Առաջածոր գյուղի մոտ
52	«Թթու ջուր» հանքային աղբյուր	Թբղլու գյուղի արմտյան եզրին
53	«Մթնածորի» աղբյուր	Մարտակերտի շրջան, Դաթերք գյուղից 7,5կմ հյուսիս
54	«Հացի» աղբյուր	Մարտակերտի շրջան, Վանք գյուղի արևմտյան եզերքում, հսաչեն գետի աջ ափ
55	«Ցուրտ» աղբյուր	Մարտակերտի շրջան, Մեծ շեն գյուղից 3կմ հարավ
56	«Փոքր ջերմաջուր» հանքային աղբյուր	Շահումյանի շրջան, Ջուար գյուղից 3,5կմ հարավ, Թուփտուն գետի ձախ ափին
57	«Խոլոզանց ջերմաղբյուր» հանքային աղբյուր	Շահումյանի շրջան, Քարվաճառ շրջկենտրոնից 12 կմ հարավ-արևմուտք, Թարթառ գետի ձախ ափին
58	«Դուփտուխ» հանքային աղբյուր	Շահումյանի շրջան, Թուփտուն գետի միջին հոսանքում, Ջուար գյուղից 6 կմ հարավ, Թուփտուն գետի ձախ հովտալանջում
59	«Ներքին ջերմաջուր» հանքային աղբյուր	Շահումյանի շրջան, («Ջերմաջուր» նախկին առողջարանից 2 կմ հյուսիս)
60	«Վերին ջերմաջուր» հանքային աղբյուր	Շահումյանի շրջան, («Ջերմաջուր» նախկին առողջարանի մոտ)
61	«Բաղրսաղ» հանքային աղբյուր	Շահումյանի շրջան, («Ջերմաջուր» նախկին առողջարանից 2 կմ հարավ)
62	«Կռնկեռ» ջրվեժ	Շահումյանի շրջան, Դադիվանքի և Սբ. Աստվածածին վանքի միջև, Տրտու գետի ձախ զառիթափ լանջին
63	«Թուրշու» հանքային աղբյուր	Շուշիի շրջան, Լիսագոր գյուղի հյուսիսային եզերքում
64	«Շրլան» հանքային աղբյուր	Շուշիի շրջան, Շուշան գյուղի մոտ
65	«Պեխի» աղբյուր, (Եսայի աղբյուր)	Շուշիի շրջան, Շուշի քաղաքից 3 կմ հարավ արևմուտք
66	«Հերիկ» հանքային աղբյուրներ	Քաշաթաղի շրջան, Հերիկ գյուղի մոտակայքում
67	«Բերձոր» հանքային աղբյուր	Քաշաթաղի շրջան, Բերձոր շրջկենտրոնից 3 կմ հարավ-արևելք
68	«Շահբուլաղ» աղբյուր	Ասկերանի շրջան, «Տիգրանակերտ» պատմական տեղավայրի մոտ
69	«Նահապետ Քուչակի» աղբյուր	Մարտունու շրջան, Բերդաշեն գյուղում
70	«Անահիտի» աղբյուր	Մարտունու շրջան, Հացի գյուղում
71	«Թաս» աղբյուր	Մարտունու շրջան, Թաղավարդ գյուղից 2,5կմ հյուսիս-արևմուտք, Վարանդա գետի ափին

**IV. ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ**

72	«Սոսի արևելյան» ծառ	Հաղորութի շրջան, Տյաք գյուղի մոտ
73	«Սոսի արևելյան» ծառ	Հաղորութ քաղաքի կուլտուրայի տան մոտ, տրամագիծը՝ 120սմ, բարձրությունը՝ 29մ, տարիքը՝ 600 տարի
74	«Հարբած ծառեր»	Հաղորութի շրջան, Վարդաշատ գյուղ, ճեղքված բներով ծուռումուռ ծառեր
75	«Թաղարնի» (Ձելկվա) ծառ	Հաղորութի շրջանի Տունի գյուղի «Կարմիր Խաչ» կոչվող տեղամասում, տրամագիծը՝ 60սմ, բարձրությունը՝ 27մ, տարիքը՝ 600 տարի
76	«Սոսի արևելյան» ծառ	Մարտակերտի շրջան, Հաթերքի անտառպետություն, Թաթառի ավազան, կաղնու և հաճարենու խառը անտառում
77	«Սոսի արևելյան» ծառ	ք. Մարտակերտ, տրամագիծը՝ 200սմ, բարձրությունը՝ 25մ, տարիքը՝ 200 տարի
78	«Բոխի» ծառ	Մարտակերտի շրջան, Թալիշ գյուղ, հիմքից աղեղնածև աճել և ետ վերադարձել է իր տեղն ու վեր խոյացել
79	«Հացի» ծառ	Մարտակերտի շրջան, Թալիշ գյուղ, հիմքից աճել ու բաժանվել է 2 մասի, այնուհետև միացել և նմանվել է շեղանկյան
80	«Կաղնի» ծառ	Մարտակերտի շրջան, Վարդածոր գյուղ, բնի մեջ մխրձված է խաչքար
81	«Սոսի արևելյան» ծառ	Ասկերան քաղաքում
82	«Սղոցի» ծառերի ենթաանտառ	Ասկերանի շրջան, 20 հա սղոցու ենթաանտառ հաճարենու և բոխենու խառը անտառում
83	«Սոսի արևելյան» (Սխտորաշենի «Տնջրի») ծառ	Մարտունու շրջան, Սխտորաշեն գյուղի մոտ, տրամագիծը՝ 600սմ, բարձրությունը՝ 25մ, տարիքը՝ 2020 տարի
84	«Թաղարնի» (Ձելկվա) 0,5 հա	Մարտունու շրջան, Տառնավարգի անտառպետությունում
85	«Ծառերի մատուռ»	Մարտունու շրջան, Ննգի գյուղում
86	«Ըխտլիազ» ծառ	Մարտունու շրջան, Բերդաշեն գյուղում
87	«Թաղարնի» (Ձելկվա) տասնյակով	Մարտունու շրջան, Գիշի գյուղում

**V. ԲՆԱՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ**

88	«Դիզակ» բնապատմական տարածք (Տողածոր)	Հաղորութի շրջան, Տունի գյուղից մոտ 4-5 կմ հարավ-արևմուտք
89	«Ականայի հովիտ» բնապատմական տարածք	Մարտակերտի շրջան, Ականաբերդ գյուղի շրջակա տարածք
90	«Դիցմայրի» սոսիների պուրակ բնապատմական տարածք	Քաշաթաղի շրջան, Դիցմայրի գյուղից արևմուտք՝ 33 սահմանամերձ մասում
91	«Պատարայի գետահովիտ» (Կուսանաց բնապատմական տարածք)	Ասկերանի շրջան, Պատարա գյուղից 7կմ հարավ-արևմուտք

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ**

**Ս. ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ**